ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 02 2026թ.
№ ԿԵՆՏ/306

«Կարեն Պողոսյան» Ա/Ձ -ին / ՀՎՀՀ 57347822/
ՀՀ,Շիրակի մ.,ք.Գյումրի,Ղորղանյան 7 նրբ.,տ. 16
էլ. փոստի հասցե՝ laragharibyan9@gmail.com
Հեռ.՝ 098 82 86 76

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կարեն Պողոսյան» Ա/Ձ -ի միջև 14.11.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-7/18-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Կարեն Պողոսյան» Ա/Ձ-ն ապրանքների մատակարարման արդյունքում պետք է մատակարարեր 10000 հատ «Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան զորատեսակի կպչուն ժապավենով/», որն ամբողջությամբ չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.02.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Կարեն Պողոսյան» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **3 550** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **8 875** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 20.01.2026թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **110 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **165 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև **2026թ. փետրվարի 27**-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **110 000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **165 000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Կարեն Պողոսյան» Ա/Ձ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. փետրվարի 27-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2074 սենյակ:**

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ